«Երևանի Մոնթե Մելքոնյանի անվան հ,11հիմնական դպրոց» ՊՈԱԿ

ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

2. Սովորողը պարտավոր է՝

1/ կատարել ուսումնական հաստատության կանոնադրության, ներքին կարգապահական և սույն կանոններով սահմանված պահանջները.

- ներկայանալ ճիշտ ժամանակին և մասնակցել դասացուցակով նախատեսված բոլոր դասերին
- բջջային հեռախոսները հանձնել դասղեկին և ստանալ դասերի ավարտից հետո
- հետևել սահմանված օրվա ռեժիմին և մասնակցել դպրոցական ծրագրով նախատեսված միջոցառումներին
- առաջին դասաժամին ներկայանալ դասն սկսվելուց 10 րոպե առաջ, չուշանալ դասերից ամբողջ ուսումնական տարվա ընթացքում
- դասի ժամանակ լսարանից դուրս չգալ, իսկ խիստ անհրաժեշտության դեպքում այդ անել միայն ուսուցչի թույլտվությամբ՝ չխանգարելով և իր վրա չսևեռելով ուրիշների ուշադրությունը:
- ոտքի կանգնել, երբ ներս է մտնում ուսուցիչը կամ դպրոցի վարչակազմի ցանկացած անդամ:
- հարցեր տալու կամ հարցերին պատասխանելու ցանկության դեպքում տեղից չբղավել, այլ ձեռք բարձրացնել, սովորողներին թույլատրվում է, ուսուցչի համաձայնությամբ, ուսուցչին հարցեր ուղղել նստած տեղից:
- դասին ներկայանալ անհրաժեշտ տետրերով և գրենական պիտույքներով
- դպրոց ներկայանալ աշակերտական կեցվածքով
- դասերից անհարգելի պատճառով չբացակայել:
- հարգելի պատճառներով բացակայելու դեպքում ներկայացնել բժշկական հաստատության կողմից տրված տեղեկանքը կամ ծնողներից մեկի գրավոր դիմումը, որը կպարզաբանի և կհաստատի սովորողի բացակայության պատճառը:
- բաց թողնված ուսումնական նյութը յուրացնել ինքնուրույն, անհրաժեշտության դեպքում դիմել ուսուցչի օգնությանը:
- ստանալ հանրակրթության պետական չափորոշիչներին համապատասխան գիտելիքներ:
- ուսումնական դասընթացների ժամանակ ձեռք բերել և տիրապետել համապատասխան հմտությունների և կարողությունների:
- հարգանքով վերաբերվել մեծերին և հոգատարություն ցուցաբերել փոքրերի նկատմամբ:

- ի նշան հարգանքի ուսուցիչներին, դպրոցի մյուս աշխատողներին և մեծահասակներին դիմել <Դուք>-ով:
- առանց քննարկման կատարել դպրոցի տնօրենի կամ վարչական խորհրդի կողմից ընդունված որոշումները /դրանցից առավել կարևորները համաձայնեցվում են ծնողների հետ/:
- զերծ մնալ ուսուցիչների հետ անձնական հարաբերությունների մեջ մտնելուց:
- յուրաքանչյուր սեզոնի համար ունենալ համապատասխան հագուստ, կոշիկ և սպորտային համազգեստ /սպորտային կոշիկ/:
- հագուստը պահել կոկիկ վիճակում և առանց ավելորդ զարդարանքների, չօգտագործել կոսմետիկ միջոցներ և չհագնել բարձրակրունկ կոշիկներ, ներկայանալ առանց շպարի:
- դպրոց ներկայանալ աշակերտական կեցվածքով:
- որոշակի դեպքերում /ճամփորդության ժամանակ, տրանսպորտում, փողոցն անցնելիս, սպորտային մարզումների ժամանակ և այլ վտանգավոր իրավիճակներում/ ենթարկվել և կատարել երեխաների համար պատասխանատու դպրոցի աշխատողի պահանջներին:
- դպրոցում և դպրոցի շրջակայքում բարձրաձայն չխոսել, չաղմկել, անպարկեշտ վարքագիծ չդրսևորել:
- հոգ տանել շրջապատի մաքրության և գույքի պահպանության նկատմամբ:
- դպրոցական գրքերն ու տետրերը պահել կոկիկ վիճակում:
- հերթապահել դասարանում /հերթապահության ցուցակի համաձայն/ `հետևել դասարանի մաքրությանը, դասն սկսելուց առաջ ապահովել գրատախտակի մաքրությունը:
- հաճախել ուսումնական ծրագրով նախատեսված ֆիզկուլտուրայի դասերին, բացառությամբ այն աշակերտների, ովքեր հարգելի պատճառով ազատված են այդ դասաժամից:
- կատարել օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ:
- կասկածելի պարագաների օգտագործման կամ դպրոց բերելու դեպքում, դպրոցի ղեկավարությունն իրավունք ունի ստուգելու սովորողի անձնական իրերը, ինչպես նաև անցկացնելու բժշկական զննում, անհրաժեշտության դեպքում կարող է հրավիրվել բժիշկ թմրաբան, և եթե հաստատվի թմրանյութ կամ ալկոհոլ օգտագործելու փաստը, ապա սովորողը կարող է հեռացվել դպրոցից: Բժշկական զննումից սովորողի հրաժարվելը նույնպես հիմք է դպրոցից հեռացնելու համար:

Տնօրեն՝

Գ. Միրզոյան